TIRANA 2024

EUROPEAN HIGHER EDUCATION AREA

ՏԻՐԱՆԱ ԵԲԿՏ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

29 - 30 ՄԱՅԻՍԻ 2024

Տիրանայի Կոմյունիկե

ՏԻՐԱՆԱՅԻ ԿՈՄՅՈՒՆԻԿԵ

Վերջին 25 տարիների ընթացքում, մենք՝ բարձրագույն կրթության ոլորտի պատասխանատու նախարարներս, ուսանողների, բարձրագույն ուսումնական հաստատությունների և ակադեմիական անձնակազմի հետ համատեղ, միավորվել և միասին ստեղծել ենք Եվրոպական բարձրագույն կրթական տարածքը (ԵԲԿՏ): 2020 թվականին Հռոմում կայացած Նախարարական համաժողովի շրջանակում մենք համաձայնեցինք ընդհանուր տեսլականի շուրջ, այն է՝ ԵԲԿՏ-ն դարձնել առավել ներառական, նորարարական և փոխկապակցված: Չորս տարի անց, մենք հանդիպում ենք այստեղ՝ Տիրանայում՝ գնահատելու ձեռք բերված առաջընթացը և որոշելու հետագա քայլերը՝ մինչև 2030 թվականը ԵԲԿՏ-ի տեսլականն ամբողջությամբ կյանքի կոչելու համար: Համաձայնեցված հանձնառությունները կատարելու համար կպահանջվի ապահովել շարունակականություն և բոլոր անդամների ու համապատասխան շահագրգիռ կողմերի մասնակցություն, որպեսզի վստահ լինենք, որ բոլոր ցանկացողներին հասանելի է և ունեն աջակցություն ստանալու որակյալ բարձրագույն կրթություն՝ հիմնված մեր հիմնարար արժեքների վրա:

Աշխարհն այժմ բախվում է բարդ և փոխկապակցված աշխարհաքաղաքական, սոցիալական, տնտեսական, էկոլոգիական մարտահրավերների հետ՝ ներառյալ աճող բևեռացումը և ժողովուրդների, համայնքների և տարածաշրջանների միջև անհավասարությունները: Բարձրագույն կրթությունը, որպես հանրային բարիք և հասարակությունը փոխակերպող ուժ, անփոխարինելի դեր է խաղում այդ մարտահրավերները լուծելու և ժողովրդավար հասարակություններին առաջ մղելու գործում:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է լինեն բաց մտածողության և բազմազանության ապահով տարածքներ, և դրանք պետք է ձգտեն ուսուցման, դասավանդման և հետազոտական գործունեության միջոցով խթանել քննադատական մտածողությունը, հանդուրժողականությունը, բռնության չկիրառումը, գիտական

փաստերի վրա հիմնված երկխոսությունը, տարբեր տեսակետների խաղաղ եղանակով փոխանակումը:

Մասնավորապես, մեր տարածաշրջանում միջազգային օրենքի խախտմամբ Ռուսաստանի Դաշնության կողմից և Բելառուսի աջակցությամբ զինված հարձակումը Ուկրաինայի դեմ առաջ է բերել Ուկրաինայի բարձրագույն կրթական համակարգին միջազգային աջակցության անհրաժեշտություն և ապացուցում է ԵԲԿՏ-ի արժեքների շարունակական պահպանման և պաշտպանության կարևորությունը: Մենք ամուր կանգնած ենք Ուկրաինայի և վերջինիս բարձրագույն կրթության համայնքի կողքին և սատարում ենք ԵԲԿՏ բոլոր կառույցներում և գործունեություններում Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի մասնակցության իրավունքների դադարեցումը:

Հիմնարար արժեքներ

Բարձրագույն կրթությունը կարող է լիարժեք իրականացնել իր խնդիրները միայն այն դեպքում, եթե պահպանվեն դրա հիմնարար արժեքները: Թեև դրանք այժմ ավելի շատ են վտանգված, քան մեկ տասնամյակ կամ նույնիսկ չորս տարի առաջ, մենք վերահաստատում ենք մեր հանձնառությունը պաշտպանելու, խթանելու և պահպանելու ակադեմիական ազատությունը, ինչպես սահմանված է Հռոմի կոմյունիկեում: Բացի այդ, մենք պարտավորվում ենք պահպանել, խթանել և պաշտպանել հետևյալ արժեքները.

- **Ակադեմիական բարեվարքություն** ասելով հասկանում ենք ակադեմիական համայնքում վարքագծերի և վարվելակերպերի ամբողջություն, ուսումնառության, ուսուցման, հետազոտության, կառավարման, իրազեկման և բարձրագույն կրթության ոլորտի գործունեությանն առնչվող այլ հարցերի իրականացում՝ համապատասխան էթիկական և մասնագիտական սկզբունքներին ու չափանիշներին:
- Մեր ընկալմամբ **բուհական ինքնավարությունը** բարձրագույն ուսումնական հաստատությունների կամքն ու կարողությունն է՝ իրականացնելու իրենց առաքելություններն առանց անհարկի միջամտության և սահմանելու ու իրագործելու իրենց սեփական առաջնահերթություններն ու քաղաքականությունը՝ կապված կազմակերպչական, ֆինանսական, անձնակազմի և ակադեմիական հարցերի հետ:

- **Ուսանողների և անձնակազմի մասնակցությունը բարձրագույն կրթության կառավարմանը** ներառում է, գործընկերության և կոլեգիալության սկզբունքին համապատասխան և առանց ճնշումների կամ անհարկի միջամտության, նրանց՝ ինքնավար կերպով կազմակերպվելու իրավունքը, ընտրել և ընտրվել բաց, ազատ և արդար ընտրություններում, ներկայացնել և հաշվի առնել իրենց տեսակետները՝ նախաձեռնել և բոլոր ղեկավար մարմիններում մասնակցել քննարկումներին և որոշումների կայացմանը, իրենց ներկայացուցչական կազմակերպությունների միջոցով պատշաճ կերպով ներգրավված լինել համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունների և համակարգի կառավարմանն ու հետագա զարգացմանը վերաբերող հարցերում:
- **Բարձրագույն կրթության համար հանրային պատասխանատվությունը** հիմնականում ազգային բարձրագույն կրթական համակարգի մակարդակով իրականացվող պարտականությունների շարք է, որոնք, որպես իրենց ընդհանուր պատասխանատվության մաս, պետական մարմինները, պետք է կատարեն կրթության ոլորտի և ընդհանուր առմամբ հասարակության համար:
- **Բարձրագույն կրթության հանրային պատասխանատվությունը** բարձրագույն կրթական հանրության պարտավորություններն են ավելի լայն հասարակության նկատմամբ, որի մասն է կազմում բարձրագույն կրթական հանրությունը:

Մենք ընդունում ենք սույն Կոմյունիկեի մաս կազմող հիմնարար արժեքների վերաբերյալ հայտարարությունները: Չնայած յուրաքանչյուր արժեք կարևոր է, բոլոր վեց արժեքները պետք է ներդրվեն որպես մեկ ամբողջություն: Քանի որ մեր բոլոր կրթական համակարգերում հիմնարար արժեքների ներդրման համար պահանջվում է հուսալի մշտադիտարկում, մենք ողջունում ենք տեխնիկական մշտադիտարկման համակարգ ստեղծելու վերաբերյալ աշխատանքը և դիմում ենք Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբին (ԲԳՀԽ) հանդես գալու հաշվետու զեկույցով 2027 թվականի մեր նախարարական համաժողովին:

Առանցքային հանձնառություններ

Ինչպես 2018 թվականին Փարիզում, մենք այսօր էլ վերահաստատում ենք մեր երեք հիմնական պարտավորությունները, որոնք պետք է դառնան հաջողության

նախադրյալները Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի զարգացման և նորարարության համար, դրանք են.

- ներդնել ուսումնառության արդյունքների և կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգի վրա հիմնված ծրագրերի և աստիճանների եռաստիճան համակարգ, որը համատեղելի է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների համապարփակ շրջանակի հետ,
- աջակցել ԵԲԿՏ-ում որակավորումների ճանաչմանը՝ կիրառելով «Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման մասին կոնվենցիան» (Լիսաբոնի ճանաչման կոնվենցիա) և դրա սկզբունքները՝ միաժամանակ աշխատելով Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում ավտոմատ ճանաչման ուղղությամբ, և
- խթանել բարձրագույն կրթության ոլորտում որակի մշակույթը՝ հիմնված նպատակային որակի ապահովման գործընթացների վրա՝ համաձայն «Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում որակի ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղեցույցների»:

2024 թվականի Բոլոնիայի գործընթացի իրականացման զեկույցը հաստատում և ցույց է տալիս այս առանցքային պարտավորությունների դեռևս թերի և անհավասար կատարումը, ինչպես նաև Բոլոնիայի իրականացման համակարգող խմբի ուղղորդմամբ թեմատիկ աշխատանքային խմբերի կարևոր ներդրումը իրավիճակի բարելավման գործում:

Հետևաբար, մենք պարտավորվում ենք ապահովել համապատասխան գործողությունների ծրագրերի առկայությունը կամ մշակումը, ինչպես նաև հրապարակումը՝ իրականացման ընթացքում մնացած բացերը վերացնելու և ԵԲԿՏ-ի շրջանակում խթանելու գիտելիքի փոխանակմանն ուղղված քայլերը:

Քանի որ Բոլոնիայի գործընթացի գործիքները մշակվել են վերջին տասնամյակի ընթացքում, մենք լիազորում ենք ԲԳՀԽ-ին աշխատել դրանց հեռանկարային զարգացման, տարածման և հնարավոր ընդլայնման ուղղությամբ:

Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգի, ներառյալ ուսումնառության արդյունքների իրականացմանն աջակցելու համար մենք հրավիրում ենք ԲԳՀԽ-ին մինչև 2027 թվականը վերանայել Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգի 2015

թվականի օգտվողների ուղեցույցը՝ ամրապնդելով վերջինիս հիմնական գործառույթները և համապատասխանեցնելով այն ընթացիկ զարգացումներին՝ ներառյալ միկրո-որակավորումներին:

Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում որակի ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղեցույցների կիրառումը նպաստում է բարձրագույն կրթական համակարգերում և վերջիններիս միջև վստահությանն ու թափանցիկությանը և հեշտացնում հաշվետվողականությունն ու կատարելագործումը: Որպեսզի դրանք համահունչ լինեն շարունակական զարգացումներին, մարտահրավերներին և ակնկալիքներին, մենք հրավիրում ենք Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում որակի ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղեցույցների հեղինակներին մինչև 2026 թվականը ԲԳՀԽ-ին առաջարկել լրամշակված տարբերակ, որը մեր կողմից կընդունվի 2027 թվականի Նախարարական համաժողովի շրջանակում, ինչպես նաև ըստ անհրաժեշտության առաջարկել փոփոխություններ Համատեղ ծրագրերի որակի ապահովման եվրոպական մոտեցման մեջ: Մենք ուսանողների շահերը պաշտպանելու համար կնպաստենք նաև ամբողջ աշխարհում իրականացվող անդրազգային կրթության որակի առավել խիստ և թափանցիկ ապահովմանը, համապատասխան Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում որակի ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղեցույցների:

Ավելին, մենք պատրաստ ենք պայքարելու դիպլոմների և հավատարմագրումների տրամադրման լիազորություն չունեցող կառույցների, կեղծ որակավորումների և ակադեմիական խաբեության ծառայությունների դեմ, որոնք ավելի մատչելի են դառնում թվային ոլորտում զարգացումների շնորհիվ: Մենք խնդրում ենք ԲԳՀԽ-ին արդյունավետ օգտագործել «Էթիկան, թափանցիկությունը և բարեվարքությունը կրթության մեջ» հարթակի և ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ ցանցերի աշխատանքը՝ այս մարտահրավերներին դիմակայելու և ակադեմիական բարեվարքությունը պաշտպանելու համար:

Ներառական Եվրոպական բարձրագույն կրթական տարածք

Մենք վերահաստատում ենք **մինչև 2030 թվականը ներառական Եվրոպական բարձրագույն կրթական տարածք կառուցելու** կարևորությունը, որը կարող է հիմք հանդիսանալ համախմբված, կայուն և խաղաղ Եվրոպայի համար, որտեղ ուսանողները

կրթության բոլոր փուլերում ունեն լիարժեք աջակցություն՝ անկախ ծագումից և մեկնարկային կետից:

«ԵԲԿՏ-ում բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածությունն ամրապնդելու սկզբունքների ու ուղեցույցների» ընդունումը, համաձայն 2020 թվականի Հռոմի կոմյունիկեի, կարևոր քայլ էր այս ուղղությամբ, բայց անհրաժեշտ է անել ավելին ՝ մինչև 2030 թվականը դրանց պատշաճ իրականացումն ապահովելու համար: Մենք պարտավորվում ենք գնահատել իրականացման ընթացում ձեռք բերված առաջընթացը և խնդրում ենք 2027 թվականին ԲԳՀԽ-ին զեկուցել արդյունքների մասին: Ավելին, մենք հավանություն ենք տալիս «ԵԲԿՏ-ում բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածության սկզբունքների չափորոշիչների և նկարագրիչների փաստաթղթին»՝ որպես Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում սոցիալական ուղղվածության համար առաջին համապարփակ և համախմբված համակարգ: Միևնույն ժամանակ, մենք նպաստում ենք տվյալների հավաքագրման բարելավմանը՝ մասնակցելով այդ ուղղությամբ իրականցվող նախաձեռնություններին, ինչպիսին է «Eurostudent»-ը:

Ուսանողների բարեկեցությունը պետք է հասկանալ լայն իմաստով, ներառյալ ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական և տնտեսական կողմերը, որոնք հաճախ փոխկապակցված են: Սոցիալ-տնտեսական մարտահրավերները, ինչպիսիք են կենսամակարդակի բարձրացումը և ուսանողական հանրակացարաններում բնակվելու դժվարությունը, ընդհանուր առմամբ ազդել են բարձրագույն կրթության հասանելիության և ուսանողական կյանքի վրա, մասնավորապես, ուսանողների հոգեկան առողջության վրա: Մենք շահագրգիռ կողմերի և համայնքների հետ միասին հանձնառություն ենք ստանձնում լուծել մարտահրավերները՝ ապահովելով ուսանողներին աջակցության հասանելի ծառայություններ, ներառական ուսումնական միջավայրեր (ներառյալ թվային միջավայրերը), գենդերային հավասարություն, ինչպես նաև ուսման անուղղակի ծախսերը հոգալուն ուղղված միջոցառումներ:

Ամբողջ աշխարհում ավելանում է ապաստան փնտրող փախստականների և տեղահանված անձանց թիվը՝ ներառյալ ուսանողների և ակադեմիական անձնակազմի: Եվրոպան անվտանգ ուղղություններից մեկն է, և բարձրագույն կրթությունը առանցքային դեր է խաղում հասարակության մեջ նրանց ինտեգրման գործում: Փախստականներին աջակցելու և նրանց հմտություններն ու ներուժը լավագույնս օգտագործելու համար մենք կավելացնենք ջանքերը՝ ապահովելու նրանց որակավորումների ճանաչումը և վերացնելու

բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու խոչընդոտները, այդ թվում՝ կիրառելով ուղեցույցներ մշակված ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ ցանցերի, Եվրոպայի Խորհրդի կողմից մշակված «Փախստականների որակավորումների եվրոպական անձնագիրը» և Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի կոմիտեի կողմից ընդունված «Փախստականներին, տեղահանվածներին և փախստականի կարգավիճակ ունեցող անձանց որակավորումները ճանաչելու վերաբերյալ 2017 թվականի առաջարկությունը»:

Նորարարական Եվրոպական բարձրագույն կրթական տարածք

ԵԲԿՏ-ն պետք է նաև արձագանքի հասարակական, տնտեսական, քաղաքական, բնապահպանական և տեխնիկական զարգացումներով պայմանավորված շարունակական փոփոխություններին: Աշխարհի արագ զարգանումը էական ազդեցություն է թողնում բարձրագույն կրթության վրա: **Կանաչ և թվային ուսուցման անցումը** պահանջում է աննախադեպ նորարարություն՝ կիրառելով նոր տեխնոլոգիաներ, գործընթացներ և հմտություններ դրական փոփոխությունների խթանման համար, ինչպես նաև գիտելիքի և հմտությունների ավելի առաջադեմ և լայն շրջանակ, որը բարձրացնում է սովորողների իրազեկությունը, ներգրավվածությունը և պատասխանատվությունը:

Իր առաքելությունն իրականացնելու և համարժեք արձագանքելու համար անհրաժեշտ է բարձրագույն կրթության կայուն ֆինանսավորում, առկա ռազմավարությունների ու գործիքների կատարելագործում և ճշգրտում, ինչպես նաև նորերի մշակում: Այն ներառում է կրթության ապահովման նոր միջոցներ, ինչպիսիք են **միկրո-որակավորումները**, **համատեղ ծրագրերի** առավել շատ կիրառումը և բարձրագույն ուսումնական հաստատությունների ձեռնարկատիրական և նորարարական ներուժին աջակցությունը: Մենք կաջակցենք նրանց՝ ամրապնդելու իրենց ներդրումը հասարակության և տեղական համայնքներում, արձագանքելով բարձրագույն կրթության ոլորտում **Կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ) և «կանաչ» կրթության անցմանը**, շարունակական **թվայնացմանը,** ինչպես նաև **ֆիզիկական և առցանց ուսումնառության և ուսուցման** համակցմանը: Մենք նաև կապահովենք **համագործակցությունը Եվրոպական կրթական տարածքի (ԵԿՏ) և Եվրոպական հետազոտական տարածքի հետ (ԵՀՏ)**:

Հասարակության շրջանում **Ցկյանս ուսումնառության** կարիքը մեծանում է, հատկապես բոլոր նրանց համար, ովքեր կարիք ունեն կամ ցանկանում են նոր կարողություններ ձեռք

բերել իրենց մասնագիտական, անձնական կամ քաղաքացիական ներուժը բարելավելու համար: Ուսումնառության ուղիները պետք է լինեն ճկուն, պատշաճ կերպով տրամադրված, երաշխավորված և ճանաչված: Նրանք պետք է նպաստեն ներառականությանը, հմտությունների և որակավորումների բարձրացմանը, ինչպես նաև համապատասխանեն սովորողների, փոփոխվող հասարակությունների և աշխատաշուկաների պահանջներին: Այն նաև ներառում է նախկին ուսումնառության ճանաչումը և կրթության ապահովման նոր ձևերը, ինչպիսիք են միկրո-որակավորումները: Մենք պարտավորվում ենք խթանել բարձրագույն կրթության բոլոր ծրագրերում այսպիսի **ճկուն ուսումնառության ուղիների** կիրառումը:

Ուսանողներին անհրաժեշտ է **բարձրորակ, ուսանողակենտրոն և նորարարական մոտեցումներով ուսումնառություն և ուսուցում**, ըստ իրենց կարիքների և ցանկությունների՝ զարգացնելու այնպիսի կարողություններ, որոնք անհրաժեշտ են գլոբալ մարտահրավերները լուծելու համար: Դրա համար պահանջվում է, որ նրանք զարգացնեն համընդհանուր և ապագայի վրա հիմնված հմտություններ, ստեղծագործական և քննադատական մտածողություն, ինչպես նաև քաղաքացիական կարողություններ՝ աջակցելով նրանց ակտիվ մասնակցությանը ժողովրդավարական հասարակության մեջ և արագ փոփոխվող աշխատաշուկայում: Այս զարգացումների ընթացքում մենք պետք է ապահովենք, որ **ուսանողակենտրոն ուսումնառությունը** իրականություն դառնա բոլոր ուսանողների համար՝ զարգացնելով յուրաքանչյուր ուսանողի ներուժը՝ հետազոտության հիման վրա, կրթությանը էական աջակցության և ուղղորդման, ինչպես նաև ուսուցման միջգիտակարգային մոտեցումների միջոցով:

Մենք ընդունում ենք **դասախոսական կազմի** կարևոր **դերը** բարձրորակ, ուսանողակենտրոն և նորարարական ուսումնառության և ուսուցման գործում: Ուսուցումը պետք է գնահատվի հետազոտության և այլ մասնագիտական առաջադրանքների հետ հավասար սկզբունքով, ներառյալ անդրազգային համագործակցությունը և համայնքի ներգրավվածությունը: Դա ապահովելու համար հաստատությունները պետք է առաջարկեն համապատասխան և գրավիչ աշխատանքային պայմաններ, անձնակազմի զարգացման հնարավորություններ, գնահատում և կարիերայի աճ՝ հիմնված համապատասխան չափանիշների և ցուցանիշների վրա:

Արհեստական բանականությունն ազդում է մեր հասարակության և տնտեսության, ինչպես նաև ուսումնառության, ուսուցման, գնահատման և հետազոտության վրա: Այն

պահանջում է, հաստատությունների և համակարգերի մակարդակով, առկա, ինչպես նաև նոր մեթոդների և ռազմավարության մշակման համապատասխանություն՝ պատշաճ կերպով հաշվի առնելով հնարավորությունները, վտանգներն ու մարտահրավերները: Մասնավորապես, արհեստական բանականության մշակման և իրականացման էթիկական նկատառումները պարտադիր են: Վերջիններիս կիրառումը պետք է զերծ լինի կողմնակալություններից, ապահովի մարդկանց կողմից որոշումների ընդունման առաջնայնությունը, պահպանի տվյալների մշակման էթիկան և գաղտնիությունը, ինչպես նաև պաշտպանի ակադեմիական բարեվարքությունը: Ուսանողներին և աշխատակիցներին պետք է աջակցել արհեստական բանականությունը հասկանալու և պատասխանատու կերպով կիրառելու հարցում: Մենք պարտավորվում ենք աջակցել արհեստական բանականության էթիկական, վստահելի, պատասխանատու և իրավունքների վրա հիմնված կիրառմանը ուսումնառության և ուսուցման գործընթացում, ինչպես նաև հետազոտական պրակտիկայում՝ ապահովելով թափանցիկություն, արդարություն, ուսանողների և անձնակազմի մասնակցություն և բարեկեցություն: Մենք խնդրում ենք ԲԳՀԽ-ին իրենց աշխատանքում հաշվի առնել Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում բարձրագույն կրթության թվային անցման, ներառյալ արհեստական բանականության, ավելի լայն և երկարաժամկետ ազդեցությունը՝ մասնավորապես առանցքային հանձնառությունների և Բոլոնիայի գործընթացի գործիքների օգտագործման առնչությամբ:

Փոխկապակցված Եվրոպական բարձրագույն կրթական տարածք

Մենք վերահաստատում ենք մեր հանձնառությունը՝ հնարավորություն տալու բոլոր սովորողներին ձեռք բերել միջազգային և միջմշակութային կարողություններ: Քանի որ **Փոխկապակցված Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի** առանձնահատկությունն **ուսանողների և անձնակազմի անխափան շարժունությունն** է, մենք կավելացնենք ջանքեր՝ բացահայտելու և վերացնելու խոչընդոտները, ինչպես նաև խրախուսելու ֆիզիկական շարժունությունը, այդ թվում՝ հասնելու ուսանողների շարժունության 20% - ի շեմին: Մենք հանձնարարում ենք ԲԳՀԽ-ին նախապատրաստել գործողությունների ծրագիր՝ խթանելու բարձրագույն կրթության շարժունությունն ու միջազգայնացումը և աջակցելու ավելի կանաչ, ներառական և հավասար շարժունությանն ուղղված միջոցառումներին:

Մենք ընդունում ենք **տվյալների անխափան և անվտանգ փոխանակման** առանցքային դերը ճանաչման, որակի ապահովման և շարժունության բարձրացման, ինչպես նաև փոխգործունակության չափանիշների հաստատման գործում՝ հեշտացնելու ուսանողների հասանելիությունը շարժունության հնարավորություններին և օժանդակ ծառայություններին, ինչպիսիք են Եվրոպական ուսանողական քարտի նախաձեռնությունը և այլ նախաձեռնություններ:

Թեև բոլոր ուսանողները և անձնակազմը պետք է հնարավորություն ունենան օգտվելու ֆիզիկական շարժունությունից, մենք կաջակցենք բարձրագույն ուսումնական հաստատություններին **համատեղ շարժունության և վիրտուալ փոխանակումների** կիրառության և առավելությունների ուսումնասիրության, ինչպես նաև ուսումնական ծրագրերի միջազգայնացման խթանման գործում: Մենք պարտավորվում ենք պահպանել անդրազգային համագործակցությունը, այդ թվում՝ համատեղ ծրագրերի և համատեղ աստիճանների շրջանակում, առանցքային պարտավորությունների առավել պատշաճ իրականացման և անհարկի վարչական ու իրավական խոչընդոտները վերացնելու միջոցով: Այս առումով մենք ողջունում ենք Էրազմուս+ ծրագրի աջակցությամբ իրականացվող **անդրազգային համագործակցության խորացման և ինստիտուցիոնալացմանն ուղղված ջանքերը**՝ հիմնված Բոլոնիայի գործիքների և պարտավորությունների վրա: Տարբեր մակարդակներում նախաձեռնությունները, ներառյալ Եվրոպական համալսարանների դաշինքները, նոր հնարավորություններ են ստեղծում մեր ակադեմիական համայնքների համար և պետք է ներառեն ուսանողների և աշխատակիցների մասնակցությունը որոշումների կայացման բոլոր գործընթացներում: Մենք ի գիտություն ենք ընդունում Եվրոպական հանձնաժողովի հաղորդագրությունը Եվրոպական որակավորում ստանալու նախագծի վերաբերյալ և սպասում ենք ԵԲԿՏ-ի հետ համագործակցությունների ուսումնասիրմանը:

Մենք վերահաստատում ենք մեր հանձնառությունը բոլոր ուսանողների և շրջանավարտների համար իրականություն դարձնել **արտերկրում որակավորումների և ուսումնառության ժամանակահատվածների ավտոմատ ճանաչումը**, ողջունում ենք Եվրոպական կրթական տարածքի ճանաչման ձեռնարկի վերանայումը և ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ ցանցերի կողմից մշակված այլ գործիքների կիրառումը և կշարունակենք խթանել որակի ապահովման և թափանցիկության գործիքների օգտագործումը, ինչպիսին է Արտաքին որակի ապահովման արդյունքների տվյալների շտեմարանը:

Մենք ողջունում ենք **Գլոբալ քաղաքականության ֆորումի հայտարարության** ընդունումը և խնդրում ենք ԲԳՀԽ-ին և վերջինիս աշխատանքային կառույցներին շարունակել զարգացնել և ամրապնդել երկխոսությունն ու համագործակցությունը տարբեր մակարդակներում մակրո-տարածաշրջանների և համապատասխան կոնտակտների հետ: Վերջինս ներառում է որակավորումների շրջանակին փոխադարձ հղում կատարելը և կրեդիտային համակարգերը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման գլոբալ և տարածաշրջանային կոնվենցիաների վավերացումը և ներդրումը, ինչպես նաև երկրորդ սերնդի տարածաշրջանային ճանաչման կոնվենցիաները և որակի ապահովման սկզբունքների համապատասխանեցումն ու դրանց շուրջ փոխըմբռնումը:

Մենք գիտակցում ենք Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի բոլոր երկրների կողմից **շարունակական աշխատանքի վերաբերյալ գիտելիքի տարածման և երկխոսության ամրապնդման անհրաժեշտությունը**՝ քաղաքականության մշակումների և բարձրագույն կրթության համայնքի միջև առավել արդյունավետ կապ ապահովելու նպատակով: Այն կարող է ներառել նաև միջազգային և ազգային փորձագիտական ցանցերի հիմնադրում՝ աջակցելով դրանց իրականացմանը և համագործակցությանը ԲԳՀԽ-ի հետ և սահմաններից դուրս:

Հեռանկար

2027 թվականի մեր Նախարարական համաժողովի համար մենք լիազորում ենք ԲԳՀԽ-ին ապահովելու քաղաքական հանձնառությունները, որոնք ուղղված են մինչև 2030 թվականը **ներառական, նորարարական և փոխկապակցված Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի** ստեղծմանը՝ հիմնարար արժեքների հաշվի առմամբ, պատշաճ կերպով ենթարկել մշտադիտարկման, այդ թվում՝ Բոլոնիայի գործընթացի իրականացման զեկույցի միջոցով, որը գնահատում է հիմնական զարգացումները: Մենք նաև խնդրում ենք ԲԳՀԽ-ին, որ 2027 թվականին մեզ ներկայացնի առաջարկներ հաջորդ տասնամյակի հիմնական առաջնահերթությունների վերաբերյալ՝ սերտ համագործակցելով բարձրագույն ուսումնական հաստատությունների, անձնակազմի և ուսանողների հետ:

Մենք ողջունում ենք, որ **Սան Մարինոն՝ ԵԲԿՏ-ին վերջերս միացած անդամը**, հիմնականում իրականացրել է իր՝ ԵԲԿՏ-ին միանալու համաձայնեցված

ճանապարհային քարտեզը, և մենք աջակցում ենք Սան Մարինոյին շարունակել չլուծված խնդիրների հասցեագրումը:

Մենք երախտագիտությամբ ընդունում ենք **Ռումինիայի և Մոլդովայի Հանրապետության առաջարկը՝ հյուրընկալել հաջորդ ԵԲԿՏ նախարարական համաժողովը և ԵԲԿՏ Գլոբալ քաղաքականության ֆորումը, որոնք տեղի կունեան 2027 թվականին:**

Հաշվի առնելով Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի երկարաժամկետ բնույթը՝ մենք կարծում ենք, որ այժմ ավելի խիստ կառուցվածքային պայմանավորվածություններ են անհրաժեշտ դրա հետևողական, կայուն զարգացումն ապահովելու համար: Ուստի, մենք.

- ընդունում ենք **«Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ընթացակարգի կանոնները»** և առաջարկում ենք ԲԳՀԽ-ին սահմանված կարգով ընդունել ընթացակարգի վերանայված կանոնները իր գործունեության համար,
- լիազորում ենք ԲԳՀԽ-ին **շարունակել աշխատել երկարաժամկետ, անկախ, միջազգային անձնակազմ ունեցող Քարտուղարություն ստեղծելու հնարավորության ուղղությամբ**՝ ԲԳՀԽ-ին արդյունավետ աջակցություն ցուցաբերելու համար, ինչպես նաև 2026 թվականի գարնանը գնահատելու համապատասխան առաջարկները, նմուշները և տեխնիկական առաջադրանքները իրագործելիության ու կայունության տեսանկյունից, որոնք կներկայացվեն հաստատման և իրագործման 2027 թվականի մեր Նախարարական համաժողովի շրջանակում,
- համաձայնում ենք **գնահատել** պայմանավորվածությունը երկրու աշխատանքային ժամկետների ավարտից հետո:

Տիրանայի կոմյունիկեով ստանձնած հանձնառություններ

- Մենք հաստատակամ ենք մինչև 2030 թվականը իրականություն դարձնել ներառական, նորարարական և փոխկապակցված ԵԲԿՏ-ն:
- Մենք ամուր կանգնած ենք Ուկրաինայի և վերջինիս բարձրագույն կրթության համայնքի կողքին և որոշում ենք սատարել ԵԲԿՏ բոլոր կառույցներում և

գործունեություններում Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի մասնակցության իրավունքների դադարեցմանը:

- Մենք վերահաստատում ենք մեր հանձնառությունը պաշտպանելու, խթանելու և պահպանելու ակադեմիական ազատությունը, ինչպես սահմանված է Հռոմի կոմյունիկեում: Բացի այդ, մենք ստանձում ենք հանձնառություն պահպանելու, խթանելու և պաշտպանելու ակադեմիական բարեվարքության, բուհական ինքնավարության, բարձրագույն կրթության կառավարման գործընթացում ուսանողների և անձնակազմի մասնակցության, ինչպես նաև բարձրագույն կրթության համար հանրային պատասխանատվության և բարձրագույն կրթության հանրային պատասխանատվության արժեքները և ընդունում ենք սույն Կոմյունիկեով սահմանված հիմնարար արժեքների մասին հայտարարությունները: Մենք ողջունում ենք տեխնիկական մշտադիտարկման համակարգ ստեղծելու վերաբերյալ աշխատանքը և խնդրում ենք ԲԳՀԽ-ին 2027 թվականի մեր համաժողովի շրջանակում հաշվետու զեկույցով հանդես գալ:
- Մենք հանձնառություն ենք ստանձնում ապահովելու համապատասխան գործողությունների ծրագրերի առկայությունը կամ մշակումը, ինչպես նաև հրապարակումը՝ իրականացման ընթացքում մնացած բացերը վերացնելու և ԵԲԿՏ-ի շրջանակում գիտելիքի փոխանակմանն ուղղված քայլերը խթանելու համար: Մենք լիազորում ենք ԲԳՀԽ-ին աշխատել առանցքային հանձնառությունների հեռանկարային զարգացման, տարածման և հնարավոր ընդլայնման ուղղությամբ: Ավելին.
  - մենք հրավիրում ենք ԲԳՀԽ-ին մինչև 2027 թվականը վերանայել Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգի 2015 թվականի օգտվողների ուղեցույցը՝ ամրապնդելով վերջինիս հիմնական գործառույթները և համապատասխանեցնելով այն ընթացիկ զարգացումներին՝ ներառյալ միկրո-որակավորումներին,
  - մենք հրավիրում ենք Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում որակի ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղեցույցների հեղինակներին մինչև 2026 թվականը ԲԳՀԽ-ին առաջարկել լրամշակված տարբերակ, որը մեր կողմից կընդունվի 2027 թվականի Նախարարական համաժողովի շրջանակում, ինչպես նաև անհրաժեշտ դեպքում փոփոխություններ կարվեն Համատեղ ծրագրերի որակի ապահովման

եվրոպական մոտեցման մեջ: Մենք ուսանողների շահերը պաշտպանելու համար կնպաստենք նաև ամբողջ աշխարհում իրականացվող անդրազգային կրթության որակի առավել խիստ և թափանցիկ ապահովմանը, համապատասխան Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում որակի ապահովման եվրոպական չափորոշիչներին և ուղեցույցներին,

- մենք ստանձնում ենք հանձնառություն պայքարելու դիպլոմների և հավատարմագրումների տրամադրման լիազորություն չունեցող կառույցների, կեղծ որակավորումների և ակադեմիական խաբեության ծառայությունների դեմ, որոնք ավելի մատչելի են դառնում թվային ոլորտում զարգացումների շնորհիվ: Մենք խնդրում ենք ԲԳՀԽ-ին արդյունավետ օգտագործել «Էթիկան, թափանցիկությունը և բարեվարքությունը կրթության մեջ» հարթակի և ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ ցանցերի աշխատանքը՝ այս մարտահրավերները հասցեագրելու և ակադեմիական բարեվարքությունը պաշտպանելու համար:

- Մենք ստանձնում ենք հանձնառություն գնահատելու «ԵԲԿՏ-ում բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածությունն ամրապնդելու սկզբունքների ու ուղեցույցների» իրականացման ընթացում ձեռք բերված առաջընթացը և խնդրում ենք 2027 թվականին ԲԳՀԽ-ին զեկուցել արդյունքների մասին: Ավելին, մենք հավանություն ենք տալիս «ԵԲԿՏ-ում բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածության սկզբունքների չափորոշիչների և բնութագրիչների փաստաթղթին»՝ որպես Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում սոցիալական ուղղվածության համար առաջին համապարփակ և համախմբված համակարգ: Միևնույն ժամանակ, մենք նպաստում ենք տվյալների հավաքագրման բարելավմանը՝ մասնակցելով այդ ուղղությամբ իրականցվող նախաձեռնություններին, ինչպիսին է «Eurostudent»-ը:
- Մենք շահագրգիռ կողմերի և համայնքների հետ միասին ստանձնում ենք հանձնառություն լուծելու սոցիալ-տնտեսական մարտահրավերները, ինչպիսիք են կենսամակարդակի բարձրացումը և ուսանողական հանրակացարաններում բնակվելու դժվարությունը, որոնք ընդհանուր առմամբ ազդել են բարձրագույն կրթության հասանելիության և ուսանողական կյանքի վրա: Մենք կավելացնենք ջանքերը՝ ապահովելու փախստականների որակավորումների ճանաչումը և վերացնելու բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու խոչընդոտները:

- Մենք կաջակցենք բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ ամրապնդելու իրենց ներդրումը հասարակական և տեղական համայնքների կյանքում, արձագանքելով բարձրագույն կրթության ոլորտում Կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ) և «կանաչ» կրթության անցմանը, շարունակական թվայնացմանը, ինչպես նաև ֆիզիկական և առցանց ուսումնառության և ուսուցման համակցմանը: Մենք նաև կապահովենք համագործակցությունը Եվրոպական կրթական տարածքի (ԵԿՏ) և Եվրոպական հետազոտական տարածքի հետ (ԵՀՏ):
- Մենք ստանձնում են հանձնառություն խթանելու ճկուն ուսումնառության ուղիները, որոնք պետք է լինեն ճկուն, պատշաճ կերպով մատուցված, որակի տեսակետից ապահովված և ճանաչված բարձրագույն կրթության բոլոր ծրագրերում: Վերջինս ներառում է նաև նախկին ուսումնառության ճանաչումը և կրթության մատուցման նոր ձևերը, ինչպիսիք են միկրո-որակավորումները: Մենք պետք է ապահովենք, որ ուսանողակենտրոն ուսումնառությունն իրականություն դառնա բոլոր ուսանողների համար:
- Մենք ստանձում ենք հանձնառություն աջակցելու արհեստական բանականության էթիկական, վստահելի, պատասխանատու և իրավունքների վրա հիմնված կիրառմանը ուսումնառության և ուսուցման գործընթացում, ինչպես նաև հետազոտական պրակտիկայում՝ ապահովելով թափանցիկություն, արդարություն, ուսանողների և անձնակազմի մասնակցություն և բարեկեցություն: Մենք խնդրում ենք ԲԳՀԽ-ին իր աշխատանքում հաշվի առնել Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում բարձրագույն կրթության թվայնացման, ներառյալ արհեստական բանականության, ավելի լայն և երկարաժամկետ ազդեցությունը՝ մասնավորապես առանցքային հանձնառությունների և Բոլոնիայի գործընթացի գործիքների օգտագործման առնչությամբ:
- Մենք վերահաստատում ենք մեր հանձնառությունը՝ հնարավորություն տալու բոլոր սովորողներին ձեռք բերել միջազգային և միջմշակութային կարողություններ, և մենք կգործադրենք ջանքեր՝ բացահայտելու և վերացնելու խոչընդոտները, ինչպես նաև խրախուսելու ֆիզիկական շարժունությունը, այդ թվում՝ հասնելու ուսանողների շարժունության 20% - ի շեմին: Մենք լիազորում ենք ԲԳՀԽ-ին նախապատրաստել գործողությունների ծրագիր՝ խթանելու բարձրագույն կրթության շարժունությունն ու միջազգայնացումը և աջակցելու ավելի կանաչ, ներառական և հավասար շարժունությանն ուղղված միջոցառումներին:

- Մենք կաջակցենք բարձրագույն ուսումնական հաստատություններին համատեղ շարժունության և վիրտուալ փոխանակումների կիրառության և առավելությունների ուսումնասիրության, ինչպես նաև ուսումնական ծրագրերի միջազգայնացման խթանման գործում: Մենք հանձնառություն ենք ստանձնում աջակցելու անդրազգային համագործակցությանը, այդ թվում՝ համատեղ ծրագրերի և համատեղ աստիճանների շրջանակում, առանցքային հանձնառությունների առավել պատշաճ իրականացման և անհարկի վարչական ու իրավական խոչընդոտները վերացնելու միջոցով:
- Մենք վերահաստատում ենք մեր հանձնառությունը բոլոր ուսանողների և շրջանավարտների համար իրականություն դարձնել արտերկրում որակավորումների և ուսումնառության ժամանակահատվածների ավտոմատ ճանաչումը, ողջունում ենք Եվրոպական կրթական տարածքի ճանաչման ձեռնարկի վերանայումը և ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ ցանցերի կողմից մշակված այլ գործիքների կիրառումը և կշարունակենք խթանել որակի ապահովման և թափանցիկության գործիքների օգտագործումը, ինչպիսին է Արտաքին որակի ապահովման արդյունքների տվյալների շտեմարանը:
- Մենք ողջունում ենք Գլոբալ քաղաքականության ֆորումի հայտարարության ընդունումը և խնդրում ենք ԲԳՀԽ-ին և վերջինիս աշխատանքային կառույցներին շարունակել զարգացնել և ամրապնդել երկխոսությունն ու համագործակցությունը տարբեր մակարդակներում մակրո-տարածաշրջանների և համապատասխան կոնտակտների հետ: Վերջինս ներառում է որակավորումների շրջանակին և կրեդիտային համակարգերին փոխադարձ հղումը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման գլոբալ և տարածաշրջանային կոնվենցիաների վավերացումը և ներդրումը, ինչպես նաև երկրորդ սերնդի տարածաշրջանային ճանաչման կոնվենցիաները և որակի ապահովման սկզբունքների համապատասխանեցումն ու դրանց շուրջ փոխըմբռնումը:
- Մենք լիազորում ենք ԲԳՀԽ-ին ապահովել, որ քաղաքական հանձնառությունները, որոնք ուղղված են մինչև 2030 թվականը ներառական, նորարարական և փոխկապակցված Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ստեղծմանը, հիմնարար արժեքների հաշվի առմամբ պատշաճ կերպով մշտադիտարկվում են, այդ թվում՝ Բոլոնիայի գործընթացի իրականացման զեկույցի միջոցով, որը գնահատում է հիմնական զարգացումները:

- Մենք նաև խնդրում ենք ԲԳՀԽ-ին, որ 2027 թվականին մեզ ներկայացնի առաջարկներ հաջորդ տասնամյակի հիմնական առաջնահերթությունների վերաբերյալ՝ սերտ համագործակցելով բարձրագույն ուսումնական հաստատությունների, անձնակազմի և ուսանողների հետ:
- Մենք ընդունում ենք «Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ընթացակարգի կանոնները» և առաջարկում ենք ԲԳՀԽ-ին սահմանված կարգով ընդունել ընթացակարգի վերանայված կանոնները իր գործունեության համար, մենք լիազորում ենք ԲԳՀԽ-ին շարունակելու աշխատել երկարաժամկետ, անկախ, միջազգային անձնակազմ ունեցող Քարտուղարության ստեղծելու հնարավորության ուղղությամբ՝ ԲԳՀԽ-ին արդյունավետ աջակցություն ցուցաբերելու համար, ինչպես նաև գնահատելու համապատասխան առաջարկների, նմուշների և տեխնիկական առաջադրանքների իրագործելիությունն ու կայունությունը 2026 թվականի գարնանը, որոնք կներկայացվեն հաստատման և իրագործման 2027 թվականի մեր Նախարարական համաժողովի շրջանակում և մենք համաձայնում ենք գնահատել ձեռք բերված պայմանավորվածությունը գնահատում երկու աշխատանքային ժամկետների ավարտից հետո: